ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/65, 30.07.2021թ.

Բողոք բերող անձ՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87» գնանշման հարցում

Գնման առարկան՝ դեղորայքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. չեղյալ համարել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը,
2. պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ ճանաչել հանձնաժողովի որոշումը թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին,
3. պարտադրել պատվիրատուին թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով պայմանագիր կնքել «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հետ, որպես նվազագույն գին առաջարկող մասնակից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Երևան, Մելիք-Ադամյան 1

Բողոք ներկայացնող անձի անվանումը՝ «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ
տնօրեն՝ Էդուարդ Փոթոյան
անձնագիր AN0206175, տրված 028-ի կողմից 25.07.2012թ-ին
հասցե՝ ք. Երևան, Աբովյան փ. 23շ

Պատվիրատուի անվանումը և հասցեն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք. Վանաձոր, Գ. Նժդեհի փող. 2/42

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87»
դեղորայքի մատակարարում

ԲՈՂՈՔ

1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ հայտարարել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 ծածկագրով դեղորայքի մատակարարման գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել նաև «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ-ն:

02.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն որոշել է մեկ օրով կասեցնել նիստը և շտկման պահանջ ներկայացնել «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ-ին (կից ներկայացնում ենք):

Մեր կազմակերպության կողմից 1 օրվա ընթացքում ներկայացվել է հավելված 1.1-ի շտկված տարբերակը:

09.07.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով պատվիրատուն հաստատել է, որ «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթղթերը (կից ներկայացնում ենք):

Նույն արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշել է առաջարկվող ապրանքների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին ստուգելու համար մասնակիցներից պահանջել մեկօրյա ժամկետում ներկայացնել ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում գրանցված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթերը:
Մեր կազմակերպության կողմից ներկայացվել է գրություն, որ այս փուլում մասնակիցը պարտավոր չէ ապացուցել դեղի գրանցված լինելու փաստը և տվյալ փաստը պատվիրատուն կարող է ստուգել ապրանքների մատակարարման ժամանակ:

21.07.2021թ-ի թիվ 5 արձանագրությունով՝ հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության գրությունը, պատվիրատուն առանց որևիցե հիմքի մերժում է «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի օրինակի համար թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինները: (կից ներկայացնում ենք):
Նշված չափաբաժինների մասով մեզ մերժելու պատճառով հաղթող է ճանաչել այլ մասնակիցների:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 41 և 42 կետերի եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում

մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

Փաստացի, մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, ինչը պատվիրատուն հաստատել է 09.07.2021թ-ի արձանագրությունում: Իսկ մասնակցից պատվիրատուն այլ փաստաթղթերի առանձին պահանջ ներկայացնելու իրավասություն չունի:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Չեղյալ համարել «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/87 գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Պարտավորեցնել պատվիրատուին չեղյալ ճանաչել հանձնաժողովի որոշումը թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին:

Պարտադրել պատվիրատուին թիվ 11, 13, 20, 56, 57, 58 չափաբաժինների մասով պայմանագիր կնքել «ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ-ի հետ, որպես նվազագույն գին առաջարկող մասնակից:

4. Կից ներկայացնում ենք բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

5. Այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

«ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ
ՀՎՀՀ 02835324
garg.llc@mail.ru
բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300391619700

Առդիր՝ 19 թերթ:

«ՁԻԱՐՁԻ» ՍՊԸ
տնօրեն՝ Էդուարդ Փոթոյան

(ստորագրություն)

Կ.Տ

29.07.2021թ.